ԽՆԴՈՒԹՅՈՒՆ

(ՎԽԳՄ ՀԱՅԿ. ՍԵԿՑԻԱՅԻ ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ԵՐՄԵՆ ԾՈՎԸԿ
ԱՍԱՏՈՒՐ ՇԵՄՍ
ՄԵՐՏԻՆ ԱՄՑԱՆ
ԵՐՏԱՇԵՍ ԲԵԹԱՆՑԱՆ
Մ. ԲԱՓՓԻՆ
Մ. ԳՈՒՍԱՆ
ԿԱՄՈ ԿԵՐԱԶԱԴԵ
ՄԻՐԱՔ ՄԻՐԱՔՅԱՆ
ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
ՇԵՓԵՐԱՏ ՍԵՎԱՔԵՐԵՅԻ
ՎԱՉԳԵՆ ՏԱԼՅԱՆ

14

«ՊՐՈԼԵՏԱՐ»-Ի
ԳՐԱԴԱՐԱՆ

891.99
Խ-63
19 NOV 2011

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

№ 14

„ՊՐՈԼԵՏԱՐ"-ի
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԽՆԴՈՒԹՅՈՒՆ

(ՎՐԱՍՏԱՆԻ ԽԳՄ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՅԻՆ
ԿԻՑ ՅԵՐԻՏԳՐՈՂՆԵՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ «ՊՐՈԼԵՏԱՐ» ՈՐԴԵՐԻ
ԹԻՖԼԻՍ 1936 թ.

БИБЛИОТЕКА
Академії Наук

08 MAY 2013
34702

Գլխ. խմբագիր՝ Կ. Ագրոյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Դովլաթյան

ՀԱՅԿ ԱԳՐ. ՀԱՆ.
Ա. Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
8391-53

Տպ. «Զարյա Վոստոկայի» Ա. Յ. Մյասնիկյանի անվան
Գրավոր 296 Գլավլիտ Գ— 314 Քանակ 2000

ԱՐՄԵՆ ԾՈՎԱԿ

ՅԵՐԳ ԲՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅԵՐԳԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քե՛զ եմ յերգում, ո՞վ բնություն,
Վոր նման ես ճոխ հանդեսի.
Դու ծով հույզի ծո՞վ խնդություն,
Վոսկեյերա՞զ, վոսկետեսի՞լ...
Նման ես դու արեվազուն,
Զբնաղագեղ այն աղջկան,
Վոր կա միայն վառ յերազում,
Իսկ այս կյանքում չկա՞, չկա՞...
Սիրում եմ քեզ ինչքա՞ն-ինչքա՞ն՝
Ո՞վ սիրասուն ու գեղանի,
Ինչպես քնքույշ մի աղջկա
Սիրի պայծառ մի պատանի...
Ո՞, այդպե՛ս են յերգել մի որ
Հին յերգիչներն այն սի՛ն կյանքի,
Ցեվ յերգերով անջինջ ու խոր,
Գովերգել քո զարդերն անգին,
Ց՛եվ դաշտերում անծիր, ազատ,
Ցե՛վ անտառում քո արեվոտ,
Այգիներում քո ծաղկազարդ,
Մարգարտացող աղբյուրի մոտ:
Այդ նրա՛նք են, վոր անվստահ
Զբոսնել են, հոգնել, ննջել,

Կամ ծառի տակ հանգիստ նստած՝
Սոսկ հիացքի խոսքեր փնջել...

*
* *

Իսկ մենք, իսկ մենք, ո՜վ բնություն,
Մի նոր կյանք ենք կերտում հիմա
Ու ստեղծում ենք նոր խնդություն
Յե՛վ նորաստեղծ, և՛ նորիմաստ...
Մենք ուզում ենք, վոր աննման
Պայծառ լինի այս նոր դարը
Յեվ բուրավետ ծաղկի նման,
Փարթամանա մեր աշխարհը...
Մենք՝ պոետներն այս նոր դարի
Միշտ հուզվում ենք քո վարդերով,
Բայց չենք փախչում նոր պայքարից
Ու չենք տարվում յերազներով...
Այլ պատռելով լեռ ու սարեր
Ու սանձելով ջրեր վարար,
Մենք վառում ենք ինչքա՜ն արեվ,
Լուսավորում աշխարհն արար,
Վոր մեր կյանքը, ո՜վ բնություն,
Զվարթ լինի, զվարթածայն,
Լինի հույզի ծո՜վ խնդություն,
Վոսկեշողու՜ն, վոսկեպայծառ...

ՄԱՀ ՅԵՎ ԱՆՄԱՀՈՒԹՅՈՒՆ

Հողմի նման կանցնեն որեր,
Հույզեր ու սեր դալարուն.
Կանցնեն որեր, կգան նորեր,
Նոր խնդություն, նոր գարուն...
Բայց հանճարի յե՛րգը վսեմ
Կապրի մեծ ու վիթխարի,
Վորպես պայծառ արեվ լուսեղ՝
Յերբե՜ք, յերբե՜ք չի մարի...
Հանճար մարդու կյանքը՝ մի գետ,
Թելքը՝ արեվ վոսկեվառ.
Նա վորպես մարդ կանցնի հավետ,
Վորպես հանճար՝ կապրի հար...

ԽԱՅԱՄԻ ՅԵՐԳԸ

Խայամն ասաց.—թե վոր կուզեք
Ձեր վողջ կյանքը ուրախ լինի,
Քաղցր տաղով սրտեր հուզեք,
Անվերջ խմեք կարմիր գինի.
Միք տրտնջա, միք պայքարի,
Այլ հուզվեցեք ծաղկանց բույրով
Յեվ արբեցեք սիրած յարի
Անու՛շ-անու՛շ վառ համբույրով...
Սակայն յեթե մեր կյանքն հոսեր
Այդ հին հունով, այդքան անզոր.—
Ձեր լինի արդ վո՛չ յերգ, վո՛չ սեր,
Վոչ խնդությու՛ն արեվազոր...

ԳԱՐՆԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Ծաղիկներն այսոր ժպտում են անուշ
Անծայր դաշտերում խնդությամբ վողող,
Մեր կյանքի շնչով բացվում, բարձրանում
Սրտերը լցված արեվի շողով...

Ծաղիկներն այսոր ժպտում են պայծառ
Ու հմայում են մեզ իրենց բույրով,
Ապրում են, շնչում դաշտերում արձակ,
Հուզվում արեվի անուշ համբույրով...

— Այդ մանկիկներն են մեր գարուն կյանքի,
Վոր արդ ժպտում են ծաղկունքի նման,
Լցվում են գարնան թովչանքով անգին
Ու ապրում մեր նոր կյանքով աննման...

Այդ մանկիկնե՛րն են սիրով լցվում են,
Վորպես վարդերը՝ շողշողուն ցողով.
Ծաղկանց պես ժպտում, աճում, բացվում են՝
Սրտե՛րը լցված արեվի շողով...

ՔԱՌՅԱԿՆԵՐ

I

Քո տաղերը, վառ խաղերը
ինչքան լսեմ Սայաթ-Նովա,
Ասում եմ յես՝ ինչքա՜ն մեծ ես,
ինչքա՜ն վսե՛մ, Սայաթ-Նովա.
Դու՝ հանճար մարդ, մեջլիսի զա՛րդ,
ու մեջլիսի տերը քո դեմ,
Ինչին մարդ ես, անփայլ զարդ ես,
նենգ ու նսե՛մ, Սայաթ-Նովա։

II

Ուր տխրություն, ուր խնդություն
ու տա՜ղ լինի, ենտեղ դու կա՛ս,
Ուր սե՛ր անվիշտ, ուր սիրո վիշտ
ու դա՜ղ լինի, ենտեղ դու կաս.
Դու՝ մի անտուն, խոսնակ ըլբուլ,
վարդի եշխով հոգիդ արբած,
Ում վառ սրտում սեր ու խնդում,
ու բա՜ղ լինի, ենտեղ դու կա՛ս։

ՅԵԼՆՈ՞ՒՄ Է ՆՈՐ ԹԻՖԼԻՍԸ

Ահա քաղաքն իմ դեմ, վորպես ծփուն մի ծով
Ալիքները նետած բլուրների վրա,
Ահա Քուռը, նրա պայծառ սրտի միջով
Շառաչում է, վորպես մի արնատար յերակ։

Քուռը, վոր իր վարար ալիքներով վողող
Բարձրացել է հաճախ իր մաշված ափերից,
Հեղեղել է անահ այգիներ ու փողոց
Յեվ բեկորներ տարել ավերվող տներից։

Հիմա նա սանձվում է բետոնակուռ ափով,
Վոր սրտումն իր սեղմած և՛ աղաղակ, և ճիչ,
Ինչքան ուռչի վաղը սարսափելի թափով—
Դուրս չպրծնի յերբեք պիրկ ափերի միջից։

Ահա ուժը նրա ալիքներով լուսե,
Ծիծաղում է վերից ճաճանչներում արծաթ,
Ջինջ ջրերին կախվում վոնց աղջկա հյուսեր,
Սուզվում գիրկը նրանց՝ կարոտ ու հուշ դարձած...

Պողոտաներ ահա, ասֆալտապայլ, լուսե,
Կապույտ կայծեր ցրող տրամվայներ զնգուն,
Դեմքե՞ր, դեմքե՞ր անթիվ, հաղթանակող ու սեգ
Դեմքեր՝ խոհուն ու լուրջ, դեմքե՞ր՝ վառ ու խնդուն:

Ահա շենքերը նոր, լուսաժպիտ ու վեհ,
Ունկնդրելով յերկրիս կառուցման մեծ յերգին,
Մեր նոր կյանքի վոճով քար ու կրից ծուլվել՝
Դեպի արեվն են յելնում թափով մի խնդագին:

ՆԱՄԱԿԸ

Դուռս բաց արեց փոստի ցրիչը,
Սեղանիս դրեց մի ճերմակ ծրար.
Ցես հազիվ սեղմած հուզումիս ճիչը՝
Ուրախ քայլերով մոտեցա նրան:

Դուրս եյի քաշել բառածալ մի թերթ,
Վրան ինձ համար անծանոթ գրեր.
Նայում եյի լուռ, խորհում եյի, թե
Այս նոր նամակը ինձ ո՞վ է գրել:

Արդյոք Սուրե՞նը, Թամա՞ը, Կոլյա՞ն,
Թե՞ Արտաշեսը, վոր բանակումն է.
Սկսեցի կամաց ընթերցել յես այն,
Ցեվ սիրտս այնպե՞ս անուշ զարկում եր:

«Սիրելի վորդիս, լիկ-պունկտ գնացի...
Ցեվ այս նամակը գրում եմ ինքս.
Հերիք է, ինչքան ծռած պահեցի
Նամակներիդ դեմ յես իմ շինքս»:

Հուզված կանգ առա ուրախ դողոցով՝
Ձեռքիս մեջ սեղմած մի անգին նամակ։
Հրդեհվեց սիրտս պայծառ մի բոցով,
Վոր տենչում եյի յերկար ժամանակ։

Վոչ, այդ չեր գրել վոչ մի ընկերս,
Վոչ ել քույրս՝ իր կարոտի մասին.
Ո՞, այդ գրել եր գեղջկուհի մայրս,
«Լիկ-պունկտ» գնացած իմ անուշ ազին։

ԱՅՍ ՎՈՂԿՈՒՅԶՆԵՐԸ

Այս վողկույզները շեկ ու կարմիր,
Վոր արեվի շողերը գողացել են,
Ցողի կաթիլներով լողացել են,
Ստինքների նման շողացել են,
Ցեվ յերբ ցնցել ե նրանց քամին՝
Վազերի հետ մեղմիկ դողացել են,
Վառ ժպիտներով, հրամարմին
Իմ սրտի խորքը սողացել են,
Ցեվ հոգուս հույզերն ել գողացել են,
Գողացել են
Այս վողկույզները շեկ ու կարմիր։

1934 թ.

«Մաքեր» շարքից

ՏԻԵԶԵՐՔ

Մե՜ծ ես, մե՜ծ ես, տիեզերք՝
Անսահման ու անեզերք.
Արդյոք ել ու՞ր ունես դու
Յերկրի նման յեռ ու զեռ։

Մեզնից բացի, կյանք ու յերգ
Արդյոք ունե՞ս տիեզերք։

ԳԱՐՈՒՆ

Շողա՛, արև, շողա՛...
Գ. Մահարի

Շողա՛, գարուն, շողա՛,
Իմ քույր հրով վառած,
Սիրտս չի դողդողա
Քո հուրերի առաջ։

Իմ գարունն ես դու, ո՜,
Յե՛կ, վոսկեվառ ցնծա.
Դու նման չես բոլոր
Գարուններին անցա՛ծ։

Քո մեջ պուրպուր ահա
Ինչքա՜ն վարդեր կոկոն
Բացվում են ինձ նման—
Լցված սիրո՜վ, հոգո՜վ։

Յեվ դեռ, ինչքա՜ն դեռ կան,
Հունդե՜ր, անծիլ հունդե՜ր,
Վոր ուզում են դառնալ
Կոկո՜ն, բացված վարդե՜ր։

Շողա՛, զարուն, շողա՛,
Դարձիր արեվ վառման,
Վոր շողերիդ առաջ
Անձիվ հունդ չմնա։

Վոր հունդերը բոլոր,
Դառնան բացված վարդեր.
Շողերով քո վառվող
Կհյուսեմ նոր յերգեր։

1924 թ.

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻՆ

Յես կարդում եմ տողերը քո,
տողերը քո ջուհա՜ր-ջուհա՜ր,
Վառ ջուհարդար աչքերով իմ՝
Տեսնում եմ քո կյանքն անջուհար,
Ու մորմոքով ասում եմ քեզ՝
վա՜յ քո դարին Սայաթ-Նովա,
Ամբողջ կյանքում, «չրռաստ եկար,
մե լավ յարի, Սայաթ-Նովա»։

Յես ել ունեմ սիրտ քեզ նման,
մի սիրտ սիրող՝ սիրտ ովկիան,
(Յեվ ինձ նման, սրտիս նման,
Սիրողներ կան ելի այնքա՜ն)։
Բայց մեր դարում սիրո համար,
մենք չենք անում հիմա դովա,—
Մեր սերը արդ խնդություն է,
մեր սերը՝ կյանք, Սայաթ-Նովա։

1935 թ.

8391-37

ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ՔՈ ԱՉԵՐԸ

ԹԱՄԱՐԱՅԻՆ

Բորբ արեվը՝ ամպի տակից անթիվ թեժ,
Վոսկե սրեր ե կախել բարկ, շողշողուն.
Քո աչերը՝ ունքերիդ տակ յերկու թեժ
Վոսկե հուր են վառել ջերմ ու շողշողուն:

Արեվի այդ անթիվ վոսկե սրերը,
Ջերմություն ու շունչ են տալիս—
Լույս ու կյանք.—
Քո աչերի յերկու վոսկե հրերը
Խնդություն ու սեր են տալիս—
Հույս ու կյանք։

Յես սիրում եմ
Բորբ արեվը—կյանքի ծով,
Յես սեր ունեմ
Քո աչերում—կյանքի ծով։

1935 թ.

ՅԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Աչերիդ մեջ հեքիաթային փայլ կա պայծառ,
Ջինջ ե ինչպես ջուրն աղբյուրի, ջուրը զուլալ:

Կուզեմ սուզվել աչերիդ մեջ խոր ու պայծառ,
Կուզեմ խմել հեքիաթային ջուրը զուլալ։

ՅԵՐԿՐԻՆ

Սիրովքդ արբե՞լ եմ յես,
Քո անուշ յերգի համար։

Սիրու՞մ եմ, յերգու՞մ եմ քեզ,
Քո հաղթող բազկի համար։

Արտերիդ պայծառ ու հեզ
Ամեն մի հասկի համար։

Քո մանկանց, վորպես հրկեզ,
Բյուրավոր ծաղկի համար։

Բացել եմ իմ սիրտը վես
Հրաթեվ վազքիդ համար։

Ո՞ յերկի՛ր, յերգում եմ քեզ,
Քո վոսկի բերքի համար։

ԳԻՆՈՎ ԵՆՔ ՀԻՄԻ

Հե՞յ, յերկիր մեր խնդուն,
Վոսկեվոր աշնան գինով ենք հիմի
Յեվ հզորազոր պայքարի գրկում
Կարմիր ու անմահ սիրով ենք հիմի։

Այս մեր կառուցման յերգերով բոսոր՝
Բոցեղ հույզերի նորով ենք հիմի
Ու մշտադալար ծեռքերով հզոր
Հանդ ու ցանքսերի ջրով ենք հիմի։

Մեր հուր սրտերի կարկաչուն վարար,
Պայծառ տաղերի գրով ենք հիմի,
Այն, ինչ մեզ դեմ ե յելնում չար, համառ—
Նրա դեմ անպարտ գրոհ ենք հիմի։

Հե՞յ, յերկիր մեր խնդուն,
Վերջին պայքարի գինով ենք հիմի,
Յեվ հաղթանակի յերգերով թնդուն,
Անմար գալիքի սիրով ենք հիմի։

ԱՐՏԵՐԸ

Փռվել են վառ, վոսկե, անհուն
Արտեր սահուն ծովի նման,
Ցպիտներով պարզ ու անափ՝
Յերկնի անամպ մովի նման։
Թշշոցով մեղմ՝ հասկեր հասուն
Յերգ են ասում հովի նման։
Շունչն եմ զգում նրանց քնքուշ,
Դարնան անուշ զովի նման,
Ու թնդում ե սիրտս ջահել
Այս վոսկեհեր ծովի նման։

ՍԻՐՏ ԻՄ

Դու մի թռչուն թպրտուն՝
Կրծքիս այս նեղ վանդակում
Սեր ու խինդ ես բորբոքում
Յեվ մինչեվ մահ չունես քուն...

Զարկ դու ուժգին, անհողդողդ,
Հորդիր հույզեր վորպես ծով,—
Պայծառ յերգեր հյուսեմ թող,
Սիրտ իմ, կյանքի զնգոցով...

ՅԵՐԳ՝ 26-Ի ԱՆՎԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Զա՞ն, ընկերներ, ձեր դեմքն այսոր վո՞նց ե զվարթ,
Վո՞նց եք զգվել ձեր ստեղծած մեքենային.
Ձեր բորբ սրտում ուրախության հուրն անաղարտ
Լավայի պես յեռ ե գալիս տարերային։

Իմ ներսու՛մն ել ուրախության հուրն ե փայլում,
Ուրախության հուրը՝ դեպի նոր մեքենան.
Զե՞ վոր սա յե, վոր խանդավառ մեր սրտերում
Հաղթանակի հունդ ե ցանում անապական։

Զե՞ վոր սա յե շոյող գանձը իր յերկրի—
Վերջին հերոսն խպառ քանդող հինը չնչին.
Զե՞ վոր սա յե յեղբայրակից մեր ազգերի
Գատվերը նոր, վոր տալիս ենք մենք առաջին։

Զե՞ վոր սրանց յերթն ե այսոր յերկրե-յերկիր
Հզորազոր շրջում ինչպես պողպատ բանակ.
Նենգ թշնամու սիրտն ե լցվում ահ ու յերկյուղ,
Յերբ տեսնում ե ամեն վայրկյան նոր հաղթանակ...

ԱՐՏԵՐԳ

Սարերի հովերով,
Հասուն արտերով
Կոլխոզ-աղջիկն անցավ՝
Կարմիր այտերով։

Սիրտը լեցուն կորով,
Լի ծով յերգերով.
Դեմը՝ վոսկե արտեր
Հասուն հասկերով։

Հավաքում ե հասկեր,
Գեղգեղում յերգեր...
Յեվ իմ սրտում բացում
Գույնզգույն վարդեր։

Աչքե՛րն ե փայլում
Վոսկե արտերում,—
Սիրող աչքերը ջինջ՝
Յերգիս տողերում։

1935 թ.

ՀԱՆՃԱՐԸ

Մեծ առաջնորդին

Կանգնել է դարերի գագաթին,
Յեվ անվախ, և՛ խրոխտ, և՛ արի.
Ցածումը՝ ջրերը այն մթին
Գոռում են, մռնչում կատաղի։

Կանգնել է անվրդով, մտախոհ,
Աչքերին՝ դիտակը մեր դարի.
Սուզվել է դարերի ծովը խոր,
Հայացքում՝ լույսերը աշխարհի։

Գծում է գալիքի մեր ուղին,
Լույս ուղին աշխատող մարդկության,
Վորն յելած խավարից կյանքի հին,
Գնում է դեպ պայծառ ապագան։

Կռում է հիմքերը նոր կյանքի,
Կամքի դեմ՝ ամեն ինչ, ո՜, անզոր.
Միտքը վառ՝ արեվից յերկնքի—
Յեվ անմահ, և անծիր հորիզոն։

Ո՜վ հանճար մեր դարի դու վսեմ,
Քո կամքը մեր կամքն է—մենք բազում.
Քո խոսքը՝ մեր խոսքն է—ջինջ լուսերգ,
Վոր այսոր աշխարհն է վողջ հուզում։

ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Առավոտյան, յերբ շչակներն են հնչում,
Դուք ամբակուռ՝ լայն փողոցներն եք դոփում.
Յերբ նոր որը խինդ ու ավյուն է շնչում,
Գործարաններն ու հանքերն եք շտապում։

Յեվ լիջնում են զարկերը ձեր մուրճերի,
Վոր թամբել են մեր մեծ գործի տեխնիկան.
Ամեն մի ժամ աշխատանքի, մարտերի,
Դարձնում եք վաստակաբեր մի վայրկյան։

Դուք՝ հերոսներ մեր այս պարթև յերկրի,
Լծված պայծառ ղեկավարի հաղթ կոչին.
Դուք՝ մարտնչող, դուք՝ խնդություն յերգերի,
Պատրաստ՝ անպարտ դասակարգի զիլ կանչին։

Ձեր անունը կհիշվի միշտ դարերում,
Վոր հորդեցիք, վորպես ալիք արեվզոր.
Բյուր պոետներ կներբողեն յերգերում
Գործը ձեր վես ու պայքարը ձեր հզոր։

1935 թ.

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՌԱՎՈՏ

Առավոտյան լուսափրփուր,
Հեռու դաշտում համայնական
Վար են անում՝ հաղթող ու կուռ
Հերոսները մեր այս գարնան։

Բյուր նժույգներ յերկաթ բաշով,
Ակոսում են կուրծքը հողի,
Վոր ամառը՝ այն լուսաշող
Բերքով դաշտերը վողողի։

Ահա նստած նժույգներին՝
Քանի՜ հերոս արեվավառ
Շունչ են տալիս մեր պայքարին
Յեվ դաշտերին անծայր ու վառ։

Զա՜ն, նրանք ել, ահա, ինձ պես,
Գարնանային վարար հույզով
Յերգ են գրում սիրուն ու վեհ,
Հողի կրծքին՝ խոփե գրչով։

ԾՈՎ ԱՐՏԻ ՄԵՋ

Եյ-հե՛յ, ինչքան արտեր ունենք,
Աշխարհով մեկ, աշխարհով մեկ
Ադ. Վարդանյան

Հե՛յ, ջա՜ն, ահա կյանքն ե յեռում
Ծո՛վ արտի մեջ, զո՛վ արտի մեջ.
Իմ կոլխոզնիկ յարն ե բանում
Զո՛վ արտի մեջ, ծո՛վ արտի մեջ։

Արեվն յելավ, շողքը գցեց
Նո՛ր արտի մեջ, ծո՛վ արտի մեջ.
Լորիկների յերգը լավեց
Ծով արտի մեջ, նո՛ր արտի մեջ։

Առատ-առատ հունձ են անում,
Բերք են դիզում ծով արտի մեջ.
Ի՜նչ անուշ ե յերգը լավում,
Հով արտի մեջ, զո՛վ արտի մեջ։

Բյուր հասկերն են որոր յերգում
Մեր արտի մեջ, ծով արտի մեջ.
Ջահել-ջիվան յարս ե յերգում,
Հունձ ե անում զով արտի մեջ։

Վառ արտերով մրցում, խնդում,
Հունձ են անում զով արտի մեջ,
Աշխատանքի յերգն ե թնդում
Մեր արտի մեջ—ծո՛վ արտի մեջ։

ՍԵՐ

Անհուն բարձունքից ժպտում ե արփին,
Ո՜, սիրտ իմ, սիրտ իմ, դու կրկին ցնծա.
Կոմյերիտ ընկեր, քաղցրանուշ աղջիկ,
Բերել եմ սիրտս քո սրտին ընծա։

Ո՜, դու ինձ հետ ես, ինձ հետ ել կգաս,
Իմ ջահել սրտում նոր սեր ես վառել.
Իմ ջահել սրտում դու հա՛ր կմնաս,
Վորպես մի վոսկե լուսարձակ արեվ։

Մեր շուրջը՝ գրոհ, մեր շուրջը՝ գարուն,
Մարտնչում ենք մենք գալիքի համար.
Կերտում ենք նոր կյանք՝ համառ պայքարում,
Մի նոր կյանք, վորպես վոսկեշող ամառ։

Կոմյերիտ աղջիկ, ընկեր իմ անուշ,
Դառնում ե կյանքը վորպես կարուսել.
Բացվում ե մեր դեմ մի գալիք անհուն,
Ու գալիքն այդ բորբ մենք պիտի ուսենք։

Ա Ռ Վ Ա Կ

Սառել ես, դո՛ւ, փոքրիկ առվակ,
Եվ ուրախ չես կարկաչում.
Ցուրտ ձմեռն է դրել կապանք
Քո կողերին վոլորուն։

Կգա շուտով կանաչ գարուն,
Քեզ կազատի կապանքից.
Կկարկաչես կանչով սիրուն,
Կշողշողաս արեվից։

Զարահեղի ալիքներով
Դու կհոսես համարձակ,
Ու կյանք կտաս վճիտ ջրով,
Մեր դաշտերին լայնարձակ։

Մո՛տ է, մո՛տ է կանաչ գարուն,
Եվ չես լռի, ի՛մ առվակ.
Ցեվ կհոսես կամքով յեռուն,
Վճիտ առվակ, ի՛մ առվակ։

ՀՈԿՏԵՄԲԵՐԻԿԻՆ

Քո արեվուն հուր աչքերում,
Բացված կակաչ դեմքիդ փոքրիկ.
Մեր նոր յերկրի խինդն է փայլում,
Նորաբողբոջ հոկտեմբերիկ։

Սիրտդ՝ խնդուն հույզերով լի,
Վառված դեմքիդ ժպիտ կա մի.
Գալիք կյանքի կերտողը ժիր՝
Դո՛ւ, զավակ մեծ Հոկտեմբերի։

Տեսնո՞ւմ ես դու յերկիրը մեր,
Վոր աճում է քեզ պես ժպտուն.
Նոր հաղթական թափ է առել,
Ջահ է վառել ու խնդություն։

Քո այդ ճկուն մկաններում,
Ուժն է կիտված ապագայի.
Անծայրածիր մեր նոր յերկրում,
Փողն է հնչում Հոկտեմբերի։

Քո արեվուն աչիկներում,
Ու վառ դեմքիդ՝ փոքրի՜կ-փոքրի՜կ,
Մեր նոր յերկրի խինդն է փայլում,
Կարմրափողկապ հոկտեմբերիկ։

БІБЛІОТЕКА
Академії Наук
УСРР

ԲԱԳՈՒ

«Քաղաք իմ, քաղաք իմ, քաղաք իմ, Բագու,
Ինչքան հեքիաթներ կան այս գորշ քաղաքում...

Ցե. Զարեցի

Այնքա՜ն կարոտ և այնքա՜ն սեր
Սիրտս ե մաշում, Բագու.
Այնքա՜ն մկան հաղթ ու վսեմ՝
Արեվածին Բագու։

Քո ուժի հետ դաշն ե կապել
Կասպից ծովը անքուն.
Վորքա՜ն մարտի հույզ ես վառել,
Լույսի աղբյուր Բագու։

Նոր հանքերի արի վորդի,
Նավթի հորձանք ես դու.
Հողի արյուն թող միշտ հորդի
Քո բորբ սրտից, Բագու։

Քո պողպատե կրծքում՝ ինչքա՜ն—
Ինչքան կռիվ անդուլ,
Յեվ քո կրծքին՝ բազում վիշկա,
Ո՜, բազմերանգ Բագու։

1935 թ.

ՅԵՐԳ ԽՆԴՈՒԹՅԱՆ

Ցնծում ե իմ հոգին հիմա,
Յերկաթի յերգովդ վսեմ.
Բոցեղեն յերկիր իմ անափ,
Անառիկ, դո՛ւ, տիտան լուսե։

Իմ հոգին վոսկեթել թռչուն,
Թռչում ե դաշտերիդ միջով.
Յերկիր իմ, յերգերն իմ հնչուն,
Հյուսվել են որերիդ կանչով։

Վոսկեղեն արեվի սրտից,
Քամել եմ բորբ արյունն իմ վառ,
Փրփրուն հուր գինովն անբիծ,
Արբել եմ, արբած եմ հիմա։

Բարձրացող քո գիգանտ կրծքին
Դալիքիդ փարոսն ե շողում,
Վաշտերիդ ամրակուռ բազկից
Թշնամու նենգ սիրտն ե դողում։

Ցնորք չե իմ յերգը եսոր,
Վոչ յերազ՝ վոսկեղեն ու վառ.
Յերկիր իմ, որերդ բոսոր,
Բացել են հաղթական նոր դար։

Իմ յերգը որերիդ հեվքով,
Որերիդ յերթումն եմ հուզել.
Բոցեղեն կրակի ներքո
Կրակե ձեռքով եմ հյուսել։

Ցնծում ե իմ հոգին հիմա,
Յերկաթի յերգովդ հզոր.
Կանգնել եմ քո բերքի դիմաց,
Ու սրտանց յերգում եմ եսոր։

ՍԻՐՏ ԻՄ

Սիրտ իմ, հզոր ու ծարավ,
Յերջանկության մի ովկիան.
Լցված հույսի խենթ գինով,
Նետում ես ինձ վոսկեղեն
Կյանքի հորձանքը վարար,
Ուր յերգեր կան առնական,
Ուր կյանքն ե միշտ հարաճում,
Հողմերի պես շառաչուն։
Պայքարատենչ ու բոսոր,
Վոսկեյերակ սիրտ իմ վառ,
Տենչանքով լի ու հզոր,
Լցվիր դու նոր խնդությամբ։

ՆՎԵՐ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Այս իմ մատաղ սրտում վորքա՞ն յերգ եմ հյուսել,
Քո կառուցման թափի, քո տեմպերի համար,
Այս իմ մատաղ սրտում հազա՞ր վողջույն լուսե
Բերել եմ քեզ նվեր, ջա՞ն, իմ յերկիր անմար։

Բոլշեվիկյան յերկիր, Վրաստան իմ խնդուն,
Քո տեմպերում վսեմ՝ ինչքա՞ն յերգեր վառման,
Ո՞, յերկիր իմ տոկուն, վորքան եմ քեզ սիրում,
Պայքարներդ հուժկու ու գալիքդ անահ։

Քո կառուցման թափը, ո՞, ինձ շատ ե գերում,
Ցեվ բանակդ հսկա այնքան մեծ ու հզոր,
Ցեվ գետերդ վարար, վոր լույսերով բազում
Հին գիշերը խավար դարձրել են կեսոր։

Քո վերելքի ճամփին, վորքան պայքար ունես,
Քո հաղթական աճին՝ վորքան յերգ ու խնդում.
Վրաստան, ի՞մ յերկիր, հաղթանակով պես-պես,
Նվաճումներիդ հաղթ՝ հազա՞ր-հազա՞ր վողջույն...

ՎՈՂՋՈՒ՞ՅՆ ՁԵԶ

Ո՞, վողջու՞յն ձեզ, սիրուն, ծաղկած անուշ դաշտեր,
Ո՞, վողջու՞յն ձեզ, բազում, մկանակուռ վաշտեր.
Ցես յեկել եմ ձեզ մոտ, վողջույններով անգին,
Ցեվ յերգերով իմ բորբ՝ խնդուն ու թանկագին։

Թող ամեն տեղ հիմա ամեն բերան խոսի
Մեր վառ կյանքի մասին՝ լենինյան մեծ դարում,
Թող յերգերիս առուն ձեզ համար միշտ հոսի,
Ցեվ այդ առվի ափին ծաղկի հազար գարուն։

Գարունների թովիչ ծաղկանց քաղցր բույրով,
Կոլխոզ կյանքը յեռա գալիքի դեմ լուսե.
Ձե՞ վոր յես ել հիմա զնգուն իմ յերգերով
Ձեր հրավառ կյանքն ու աշխատանքն եմ հյուսել։

Ցես տեսնում եմ հիմա կանաչ դաշտեր անափ,
Հազարագույն վարդեր ինձ ժպտում են սիրուն,
Ու լցվել ե դաշտը խնդուն ծիծաղ ու ծափ,
Ցեվ դաշտերում զվարթ աշխատանքն ե յեռում։

Ցես յեկել եմ ձեզ մոտ վողջույններով հազար,
Ինձ շրջկոմն ե ղրկել, վոր հույզերս վառեմ,
Ու լենինյան դարու իմ խոսքերով վարար,
Քեզ մոտ սրտով մաքուր՝ քաղաշխատանք տանեմ։

ՄԵԶ ՄՈՏ

Կյանքը խնդուն է,
Խինդը թնդուն է մեզ մոտ.
Ծիծաղ ու յերգ է,
Զա՜ն, հասուն բերք է մեզ մոտ։

Աշխատանքը հու՜ր է,
Բազուկները կո՜ռ են մեզ մոտ.
Կառուցման թա՜փ կա,
Ծիծաղկոտ վա՜զք կա մեզ մոտ։

Պայքար ու տե՜մպ կա,
Յերկրում վերե՜լք կա մեզ մոտ.
Կոլխոզ դաշտե՜ր կան,
Խնդուն վաշտե՜ր կան մեզ մոտ։

Արեվը վա՜ռ է,
Նոր ծաղկած դա՜ր է մեզ մոտ.
Կամքը մեր սու՜ր է,
Գործը հանու՜ր է մեզ մոտ։

1933 թ.

ԽՆԴՈՒԹՅՈՒՆ

Այնտեղ, ուր հանդարտ Ոկանն է հոսում,
Ուր սոսիները որոր են ասում,—
Այնտեղ փռվել է քաղաքը ճերմակ՝
Ոդաչու-ճամբար կանաչում համակ։

Յեվ քաղաքն իմ այդ, վոր փռվել է վառ
Ու ժպտում զվարթ բերկրանքով լուսեղ,
Ո՞, գիտե՞ք, արդյոք, յես նրա համար
Ինչքա՜ն սրտաբուղխ յերգեր եմ հյուսել։

Ու միտքս արթուն, վորպես մի արծիվ,
Կտրում է ուսման բարձունքներ պուրպուր,
Վոր պահակի պես պաշտպանեմ յերկիրս՝
Նրա պայքարում ընդդեմ թշնամու։

Յեվ մութ անցյալի որերը այն գուրտ,
Ել յետ չեն դառնա, ո՜, գիտեմ հաստատ,
Ու սիրտս այսոր ուրախ ու անզուսպ
Թռչում է առաջ՝ անվհատ, վստահ։

ԿԱՐՄԻՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Վորքա՞ն վարդեր կոկոն,
Վորքա՞ն մարդիկ արի,
Վորքա՞ն յերգեր հրե՝
Հրապարակում կարմիր.

Տեսա և՛ յես նրանց՝
Հանճարներին յերկրիս.
Սիրված հերոս տեսա՝
Վոսկե արեվ դեմքին։

Նրանց վառ շուրթերից
Ցոլում եր վողջույն՝
Անցնող բյուր վաշտերին՝
Հաղթական, հնչուն։

Պայքարի լոզունգն եր
Ջնգում սրտերում՝
Նվաճման անեղեր
Մտքերով բազում։

Նրանց յերգում՝ յերգըս,
Նրանց հեվքում՝ հեվքըս.
Մեր գալիքին պայծառ՝
Ստալինյան ծեռքըս։

ՆՈՐԵԼ Ե

Այգին կթենք ծեգ-ծեգին,
Այղը լիճը, Այղը լիճը նորել ե.
Բերքն հավաքենք լիուլի,
Պտուղն հասել, բամբակը փրփրել ե։

Մենք լիճը վեր հոսեցրինք,
Այղը լիճը, Այղը լիճը նորել ե.
Ծարավ հանդեր հագեցրինք,
Են չոր հողը ծաղկի միջին կորել ե։

Թմրած գյուղերն ուժ առան,
Այղը լիճը, Այղը լիճը նորել ե.
Ծափ տվին ու պար թռան...
Ես մեր գյուղը կոլեկտիվով զորեղ ե։

Պապակ մարգով ջուր հոսեց,
Այղը լիճը, Այղը լիճը նորել ե.
Կանաչ կապեց հողն անսեզ,
Մերկ դաշտերն ել բամբակ տվին, նորել են։

1932 թ.

ՔԱՌՅԱԿՆԵՐ

(Ժողովրդական)

Պատկերը քաշենք,
Վարդ տուգը տաշենք,
Ամեն գյուղում՝ գիր ու դպրոց,
Մեր կյանքը նախշենք։

—

Տրակտորներով՝ հերկը մեր,
Ամբարներով՝ բերքը մեր.
Թշնամին վոր ծաքի ել,—
Արար-աշխարհ՝ յերգը մեր։

—

Կոլխոզային հանդին մատաղ,
Հարվածային ծեռքին մատաղ.
Կոմբայնները վարող տղի
Են ջլապինդ ծեռքին մատաղ։

—

Հանդերը՝ լայն, հողերն՝ անծիր,
Արտերը՝ ծուփ, ծով նազանի.
Արեվի դեմ՝ ջերմ շիկահեր
Հասկերը հարս ու փշավարս։
Փսփսում են սուսիկ-փուսիկ,
Վոնց ամաչեն ու նազ անեն։

ՀԱՅԿ ԳՐ.ՄՈՐ

Ց Ա Ն Կ

1. Արմեն Դավակ

Յերգ բնության և յերգիչների մասին 3
Մահ և անմահություն 5
Խայամի յերգը 6
Գարնան ծաղիկներ 7
Քառյակներ 8

Ասատուր Ծեմա

Ցեղնում է նոր Թիֆլիսը 9
Նամակը 11
Այս վողկույզները 13
Տիեզերք 14

Մարտին Ամյան

Գարուն 15
Սայաթ-Նովային 17
Քո աչերը 18
Ցանկություն 19

Արտաշես Բեժանյան

Ցերկրին 20
Գինով ենք հիմի 21
Արտերը 22
Սիրտ իմ 23

Մ. ԲաբՔին

Ցերգ՝ 26-ի անվ. գործարանի ստախանովականներին . 24
Արտերգ 25

Մ. Գուսան

Հանձարը 26
Սահմանովական մարտիկներին 27
Գարնանային առավոտ 28

Կամո Կարագյոզ

Ծով արտի մեջ 29
Սեր 31
Առվակ 32

Միրաք Միրաքյան

Հոկտեմբերիկին 33
Բազու 34
Ցերգ խնդության 35
Սիրա իմ 37

Հրաչիկ Սիմոնյան

Նվեր Վրաստանին 38
Վաղջուն ձեզ 39
Մեզ մոտ 40

Ցեփրաս Սեվքարեցի

Խնդություն 41
Կարմիր հրապարակում 42

Վազգեն Տալյան

Նոբել է 43
Քառյակներ 44

ՀՀ Ազգային գրադարան
NL0341179

154/1936

34702

Ֆ6-515

ԳԻՆԸ
50
ԿՈՊ.

891.99
Ռ-63

РАДОСТЬ

Сборник стихов молодых писателей Арм. секции ССПГ

(На армянском языке)

ИЗД. ГАЗ. „ПРОЛЕТАР"